ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/235

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.10.2020թ. թիվ 26/26-1/16235-2020 գրությամբ Ա/Ձ Ջանիկ Սևոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ վարչապետի աշխատակազմի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 23.10.2020թ. թիվ 18.2/47963-2020 գրության հիման վրա 27.10.2020թ. թիվ 26/26-1/16235-2020 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Ջանիկ Սևոյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Ջանիկ Սևոյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Ջանիկ Սևոյանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 29.10.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ա/Ձ Ջանիկ Սևոյանի (այսուհետ՝ Կատարող) և ՀՀ Վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) միջև 2020 թվականի ապրիլի 28-ին կնքվել է «Պետության

կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման» թիվ N «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/11-1» պայմանագիր:

Ըստ ՀՀ Վարչապետի աշխատակազմի ղեկավարի ՀՀ Ֆինանսների նախարարություն ուղղված գրության նշվում է, որ Պատվիրատուն հիմնվել է Տեսչական մարմնի կողմից 2020 թվականի հոկտեմբերի 17-ին ՀՀ Վարչապետի աշխատակազմի ղեկավարին ուղղված գրությամբ ներկայացվածի հիման վրա, որտեղ Տեսչական մարմինը նշել է, թե Աշխատակազմին իրազեկում է, որ Ա/Ձ-ն խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, և առաջարկել սահմանված կարգով լուծել Պայմանագիրը: Ուստիև, հիմք ընդունելով վերոհիշյալ հանգամանքը՝ Աշխատակազմը միակողմանի հրաժարվում է 2020թ. ապրիլի 28-ին Ա/Ձ-ի հետ կնքված «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/11-1» ծածկագրով ծառայությունների ձեռքբերման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն ամբողջությամբ լուծված:

Ըստ Տեսչական մարմնի կողմից 2020 թվականի հոկտեմբերի 17-ին ՀՀ Վարչապետի աշխատակազմի ղեկավարին ուղղված գրության

Տեսչական մարմինը ներկայացրել է, իբրև Պայմանագրի համաձայն՝ պայմանագրի առարկա հանդիսացող ծառայությունը պետք է մատուցվեր մինչև 2020 թվականի օգոստոսի 29-ը, սակայն պայմանագրի առարկա հանդիսացող ծառայությունը չի մատուցվել, չի հանձնվել պայմանագրով սահմանված կարգով, ինչը բացարձակ անհիմն է, քանզի օգոստոսի 27-ին պայմանագրի առարկա հանդիսացող ծառայությունը մատուցվել է Պատվիրատուին, նույն օրը էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով տրամադրել է հանձնման-ընդունման արձանագրությունը (տե՛ս Հավելված 1):

Տեսչական մարմինը ներկայացրել է, որ Պայմանագրի առարկա հանդիսացող Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կայքը Տեսչական մարմնի մասնագետները դիտել են կատարողի կողմից էլեկտրոնային փոստով ուղարկված newsnund.sevuni.am հղմամբ, որը հասանելի է եղել մի քանի օր, ինչը ևս չի համապատասխանում իրականությանը այն մասով, որ ըստ տեխնիկական բնութագրի Տեսչական մարմնի մասնագետները կայքը չպետք է դիտեին հղմամբ, այն պետք է դիտեին էլեկտրոնային-կրիչի միջոցով, որի վերաբերյալ մեր կողմից եղել է բազմաթիվ գրություններ ուղղված պատվիրատուին: Հղում, որպես այդպիսի տրամադրվել է բացառապես, որպես օժանդակող հանգամանք, որպեսզի Պատվիրատուն իր իսկ սերվերային տիրույթում խոչընդոտներ ունենալու պարագայում, օգտվի հղմամբ առկա կարգավորումներից:

Ինչպես նշեցինք, մեր կողմից բազմաթիվ անգամ եղել է գրություններ, ուղղված պատվիրատուին, որտեղ ներկայացրել ենք, որ հղումը չի հանդիսացել Պայմանագրի առարկա հանդիսացող կայքի հանձնում, այդ փաստը ամրագրված է տեխնիկական բնութագրով, մեջբերում ենք.

Կայքի հանձնման փուլում պետք է տրամադրվեն կայքի բոլոր կոդերը՝ արտաքին կրիչով:

Տեսչական մարմինը ներկայացրել է, որ տվյալ հղմամբ կայքի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են պայմանագրի անբաժանելի մասը կազմող 1.1 հավելվածի հետ անհամապատասխանություններ, որի մասին տեղյակ է պահվել Կատարողին և տրվել ժամանակ թերությունները վերացնելու համար և նշվում է, որ միաժամանակ 2020 թվականի սեպտեմբերի 3-ին էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձվել հանձնման-ընդունման արձանագրությունը՝ կցելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Այս պարբերությամբ ՀՀ Վարչապետի աշխատակազմին ներկայացված իրազեկումը քողարկում է թե այդ ինչ անհամապատասխանությունների մասին է խոսքը, ինչպես են այն հայտնաբերել և թե այդ որ փաստաթղթում է ամրագրված սեպտեմբերի 3-ի փաստը: Պետք է հայտնել, որ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձվել հանձնման-ընդունման արձանագրությունը սեպտեմբերի 7-ին (տե՛ս Հավելված 2), ավելին, փաստաթղթում նշված է օգոստոսի 27-ի ամսաթիվը (տե՛ս Հավելված 3): Այստեղ Ձեր ուշադրությունն ենք հրավիրում օգոստոսի 27-ի փաստի վրա: Փաստացի պատվիրատուն իբրև թե այն ստորագրել է 27-ին և ըստ իրեն հրապարակել սեպտեմբերի 3-ին (մինչդեռ առկա է ապացույց սեպտեմբերի 7-ի հրապարակման), ինչը ևս խախտում է ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 110-րդ կետի համաձայն էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սահմանված գործողությունները, հաշվի առնելով առանձնահատկությունները: Հատուկ ուշադրության է արժանի, որ ըստ Պայմանագրի 3.2 կետի համաձայն Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրության ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է Պայմանագրի 3.2, 3.3, 3.4 կետերով սահմանվող պարտավորություններից մեկը: Հանձնման-ընդունման արձանագրության էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով տրամադրման օրն է 2020 թվականի օգոստոսի 27-ը, իսկ հաջորդող աշխատանքային օրվանից հաշված

10 աշխատանքային օրն ավարտվում է սեպտեմբերի 10-ին: Մինչդեռ Պատվիրատուն պայմանագրի անբաժանելի մասը կազմող 1.1 հավելվածի հետ անհամապատասխանությունների մասին Կատարողին տեղյակ է պահել սեպտեմբերի 11-ին (տե՛ս Հավելված 4), ինչը ևս խախտում է Պայմանագրի 3.2 կետը, ավելին, սեպտեմբեր 7-ին էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով տրամադրված «բացասական եզրակացությունը» չի պարունակում որևէ հիմք (տե՛ս Հավելված 3), մինչդեռ «բացասական եզրակացության» տրամադրումը պետք է լինի սահմանված ժամկետում, սահմանված ձևաչափով և հիմքերով, և ոչ թե հիմքերը պետք է լինի «բացասական եզրակացության» տրամադրման օրերից հետո, ավելին՝ ժամկետի ավարտից հետո և պարունակի այնպիսի հիմքեր, որոնք մտացածին են և չեն համապատասխանում իրականությանը: Տեսչական մարմնի կողմից նշված Պայմանագրի անբաժանելի մասը կազմող 1.1 հավելվածի հետ անհամապատասխանությունների վերաբերյալ որևէ փաստական հիմք առկա չէ և այսկերպ առկա միտում լուծարելու Պայմանագիրը: «Անհամապատասխանություններ»-ի, իրական չլինելու վերաբերյալ բազմաթիվ են եղել մեր գրությունները, այդ թվում իրենց են ուղարկվել տեսաձայնագրություններ, որոնք փաստում են, որ նման «անհամապատասխանություններ» առկա չեն:

Տեսչական մարմինը նշում է, որ ի պատասխան 2020 թվականի սեպտեմբերի 15-ի Ա/Ձ-ի գրության (տե՛ս Հավելված 5), Տեսչական մարմինը նշել է, որ newsnund.sevuni.am հղման անհասանելիության պատճառով սեպտեմբերի 15-ին իրեն ուղարկված տեսահոլովակների բովանդակությունը հնարավոր չի եղել ստուգել կայքով աշխատելիս: Այստեղ կրկին պետք է նշել, որ Պատվիրատուն չպետք է ստուգի կայքի համապատասխանելիությունը տեխնիկական բնութագրին ըստ հղման, նման բան նախատեսված չէ պայմանագրով: Ցանկացած պարագայում հղումը, հանդիսանում է սերվերային կարգավորման ստուգիչ, և այն տրամադրվել է բացառապես օգնելու մեր գործընկերներին կարգավորելու իրենց սերվերային տիրույթը: Հղման լինել կամ չլինելու մասին, պայմանագրում որևէ կետ առկա չէ, և Տեսչական մարմնի նման մոտեցումը իրավազուրկ է և միտված իրականությունից կտրված պատկեր ստեղծելու և հիմքեր առաջ բերելու համար: Կրկին հատկանշական է այն փաստը, որ Տեսչական մարմինը նույն գրությամբ մեկ այլ միտք է արտահայտել, նշելով թե իբրև տեսահոլովակների ուսումնասիրության արդյունքում իրենց համապատասխան մասնագետները պարզել են, որ տեսահոլովակները չեն կարող թերությունների շտկման հիմք հանդիսանալ, քանի որ տեսահոլովակներում չի երևում դիտարկչի (browser) հասցեի մուտքագրման պատուհանը, հետևաբար չեն կարող վերստուգել տեսահոլովակներում

ներկայացվածը, ինչը խոսում է կրկին մասնագիտական խոսքով իրականությունից շեղելու հանգամանքի մասին:

Տեսչական մարմինը 2020 թվականի սեպտեմբերի 25-ին ևս մեկ գրություն է ուղարկել Կատարողին՝ առաջարկելով տասնօրյա ժամկետում տրամադրել պայմանագրի առարկա հանդիսացող ծառայության՝ տեխնիկական բնութագրին համապատասխանեցված տարբերակը, ինչպես նաև հնարավորության դեպքում կազմակերպել Կատարողի այցը Տեսչական մարմին՝ պայմանագրի առարկա հանդիսացող ծառայությունը ներկայացնելու համար: Ի պատասխան սույն գրության, մեր կողմից եղել է առաջարկ, որպեսզի հանդիպումը լինի նախապես սահմանված օրը, համապատասխան ժամի, համապատասխան մասնագետների առկայությամբ, որտեղ կներկայացվի «անհամապատասխանություններ»-ի իրական չլինելու հանգամանքը և, ըստ այդմ, կավարտվի սույն հանձնում-ընդունումը:

Տեսչական մարմինը նաև ներկայացրել է, որ 2020 թվականի հոկտեմբերի 2-ին Տեսչական մարմնում կազմակերպվել է քննարկում Տեսչական մարմնի ներկայացուցիչների, Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ներկայացուցչի և Կատարողի մասնակցությամբ: Այստեղ նշանակալից է այն հանգամանքը, որ հանդիպումը կազմակերպված չի եղել Տեսչական մարմնի կողմից, քանզի նրանք երբևէ մեզ գրություն չեն ուղարկել, սահմանելով համապատասխան օր և ժամ, բանակցությունների, քննարկումների հրավիրման փաստով, նշելով օրակարգը: Քննարկման նախաձեռնությունը չի եղել Տեսչական մարմնի կողմից, չնայած մեր բազմաթիվ հորդորների, որ ուղղված են եղել Տեսչական մարմնին, հանդիպում-քննարկումներ ունենալու համար մեզ ուղղել համապատասխան հրավերներ, որը Տեսչական մարմին կողմից չի կատարվել: Հանդիպում-քննարկումը եղել է լիազոր մարմնի՝ ՀՀ Կառավարության ներկայացուցիչ ՀՀ Կառավարության Շուկայի վերահսկողության և սննդամթերքի անվտանգության ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության պետի պաշտոնակատար Արմեն Դանիելյանի կողմից: Առկա է Ա. Դանիելյանի համապատասխան գրությունը ուղղված մեզ, հանդիպում-քննարկմանը մասնակցելու համար (տե՛ս Հավելված 6): Պետք է կրկին փաստել, որ Տեսչական մարմինը գրություններում փորձում է օրինականացնել այնպիսի փաստեր, որոնք ունեն այլ բովանդակություն և նախաձեռնողներ, այդ քայլով ևս մեկ անգամ ապացուցելով, որ Տեսչական մարմնի միտումներն այս հարցում այլ են և մշտապես մտածածին քայլեր է

ձեռնարկվում հավաստի փաստերը փոխելով: Տեղեկացնենք, որ 02.10.2020 թվականին հանդիպման ժամանակ ներկայացվել է այն կետերը, որոնք ըստ Տեսչական մարմնի կատարված չէին, սակայն հանդիպում-քննարկման ժամանակ ապացուցվել է և Տեսչական մարմնի մասնագետները ևս ընդունել են, որ կետերը, որոնց մասին նշված էր 11.09.2020 թվականի թիվ N 5805-20 (տե՛ս հավելված 4) գրությունում, կատարված են: Հանդիպման նախաձեռնող անձը՝ Ա.Դանիելյանը ևս ներկա է եղել և քայլ առ քայլ դիտել է այդ կետերի վերաբերյալ մեր ցուցադրածը, Տեսչական մարմին մասնագետների հետ ֆիքսելով կատարված աշխատանքը: Առկա է նաև Տեսչական մարմնի կողմից կատարված ձայնագրություն, որը փաստում է, որ հանդիպմանը հաստատվել է, որ մեր կազմակերպության կատարած աշխատանքը համապատասխանում է տեխնիկական բնութագրին և՛ Տեսչական մարմին կողմից և՛ ներկայացուցիչների կողմից եղել է խնդրանք ուղղված մեր կազմակերպությանը, որոշ հարցերում օժանդակելու և որպես բարի կամքի դրսևորում որոշակի նոր, պայմանագրի կետերից դուրս օժանդակող ծառայություն մատուցելու, որին մենք համաձայնել ենք, մեկ պայմանով, ավարտել այս ամենը օրենքով սահմանված կարգով: Նշենք, որ մինչ օրս Տեսչական մարմինը մեր բազմաթիվ գրություններ թողել է անպատասխան, չտրամադրելով 02.10.2020 թվականին հանդիպման ձայնագրությունը և/կամ արձանագրությունը:

Տեսչական մարմինը նշում է նաև, որ 02.10.2020 թվականին հանդիպման արդյունքում որոշվել է, որ պայմանագրի առարկա հանդիսացող ծառայությունը պայմանագրով սահմանված կարգով մի քանի օրվա մեջ Կատարողի կողմից կհանձնվի Տեսչական մարմնին, ինչը չի համապատասխանում իրականությանը, քանզի հանդիպման արդյունքում նման որոշում չի կայացվել, դա կարող է փաստել ձայնագրությունը, ՀՀ Կառավարության Շուկայի վերահսկողության և սննդամթերքի անվտանգության ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության պետ Ա. Դանիելյանը:

Հատուկ պետք է փաստել, որ Տեսչական մարմինը ՀՀ Վարչապետի աշխատակազմի ղեկավարին ուղղված գրության այս պարբերությամբ չի նշում թե 02.10.2020 թվականին հանդիպման ընթացքում ինչ է տեղի ունեցել, չնշելով որ Ա/Ձ ներկայացրել, իսկ Տեսչական մարմինը և ներկայացուցիչը ընդունել են կայքի տեխնիկական բնութագրի պահանջներին եղած համապատասխանությունը:

Տեսչական մարմինը, նշում է, որ հանդիպումից հետո գրությամբ Կատարողին հայտնել է պայմանագրով սահմանված կարգով պայմանագրի առարկա հանդիսացող ծառայությունը 3 աշխատանքային օրվա մեջ հանձնելու անհրաժեշտության մասին: Ի

պատասխան Կատարողը ներկայացրել է ոչ թե պայմանագրի առարկա հանդիսացող ծառայությունը, այլ գրություն: Այստեղ նշված չէ թե ինչու չի ներկայացվել պայմանագրի առարկա հանդիսացող ծառայությունը և Ա/Ձ-ի կողմից ինչ գրություն է ուղղվել Տեսչական մարմնին: Պատճառը պարզ է, Կատարողը փաստում է, որ պայմանագրի առարկա հանդիսացող ծառայությունը մատուցվել է, իսկ Տեսչական մամինը կրկին շեղում է բուն փաստերը, չի անդրադառնում էական նշանակություն ունեցող հանգամանքներին և պարզապես «բառեր»-ով ներկայացնելով «անհամապատասխանության» մասին գրություն չհիմնավորված և քննության չառնված փաստերով փորձում է չեղարկել Պայմանագիրը և Կատարողին ներառել գնումների մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, պատճառելով նաև էական ֆինանսական վնասներ:

Փաստացի Տեսչական մարմինը խախտել է Պայմանագրի 3.3 կետը և ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ սահմանված 110-րդ կետի 2-րդ ենթակետը և 3-րդ ենթակետի բ) մասը: Արդյունքում բացասական եզրակացությունը չի տրվել սահմանված կարգով, հիմքերով, հետևաբար անհիմն է, հետևաբար ծառայության չընդունման վերաբերյալ մերժումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305 հոդվածի համաձայն անվավեր է և համաձայն Պայմանագրի 3.4 կետի ծառայությունը համարվում է ընդունված:

Բացի վերոնշյալ կետերի խախտումից, Տեսչական մարմինը սեպտեմբերի 11-ին ներկայացրած գրությամբ (տե՛ս Հավելված 4) նշել է պայմանագրի անբաժանելի մասը կազմող 1.1 հավելվածի հետ անհամապատասխանությունների մասին, որոնք անհիմն են, և որոնց անհիմն լինելու մասին սեպտեմբերի 15-ին Ա/Ձ-ի կողմից եղել է պատասխան գրություն Տեսչական մարմնին: Այդ կետերի անհիմն լինելու փաստը ամրագրված է տեսաձայնագրություններում, ինչպես նաև 02.10.2020 թվականին հանդիպման արդյունքում: Բացի այդ պայմանագրի անբաժանելի մասը կազմող 1.1 հավելվածի հետ անհամապատասխանությունների վերաբերյալ Տեսչական մարմնի նշումը փաստեր չի պարունակում:

Արդյունքում Կատարողի կողմից ծառայությունները մատուցվելուց հետո, Պատասխանողը չկատարելով Կատարողի նկատմամբ իր ունեցած պարտականությունները, իրականացրել է հակաիրավական գործողություններ՝ Պայմանագրի 3.3 կետի և ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ սահմանված 110-րդ կետի 2-րդ ենթակետի և 3-րդ ենթակետի բ) մասով, որի

արդյունքում միակողմանի լուծարել է պայմանագիրը, պահելով մատուցված ծառայությունը, որի աշխատանքները կատարվել են չորս ամսում:

Հիմք ընդունելով վերանշյալ փաստերը, Տեսչական մարմնի կողմից օրենքների, կարգերի համապատասխան խախտումները, փաստերից զուրկ պայմանագրի անբաժանելի մասը կազմող 1.1 հավելվածի հետ անհամապատասխանությունների վերաբերյալ Տեսչական մարմնի ներկայացում, ՀՀ ֆինանսների նախարարությունը 27.10.2020թ թիվ 26/26-1/16235-2020 գրությամբ նախաձեռնված Ա/Ձ Ջանիկ Սևոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը ենթակա է մերժման»:

Ա/Ձ Ջանիկ Սևոյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/235 ընթացակարգի շրջանակներում 03.11.2020թ. ժամը 10:00-ին և 09.11.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ վարչապետի աշխատակազմը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.10.2020թ. թիվ 18.2/47963-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տեսչական մարմնի գործունեության ապահովման համար անհրաժեշտ հաշվապահական հաշվառման, գնումների կազմակերպման (ֆինանսաբյուջետային), անձնակազմի կառավարման և կազմակերպատնտեսական, տեսչական մարմնի բյուջեի, ինչպես նաև տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումների անցկացման հետ կապված վարչական (կազմակերպչական) բնույթի գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը:

Վերը նշված կարգավորման ուժով՝ տեսչական մարմնի կարիքների համար իրականացվող գնման գործընթացների պատվիրատու է հանդիսանում վարչապետի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ):

ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կարիքների համար Աշխատակազմի ղեկավարի համապատասխան հրամանով սահմանված պատասխանատու ստորաբաժանման

(տեսչական մարմինը սահմանվել է ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանում) կողմից ներկայացված գնման հայտի հիման վրա Աշխատակազմը կազմակերպել է «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/11» ծածկագրով ծառայությունների գնման ընթացակարգ, որի արդյունքում 2020թ. ապրիլի 28-ին վարչապետի աշխատակազմի և Ա/Ձ Ջանիկ Սևոյանի (այսուհետ՝ Ա/Ձ) միջև կնքվել է ՈՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/11-1 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի 7.15 կետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների:

Տեսչական մարմինը 2020 թվականի հոկտեմբերի 17-ին գրությամբ դիմել է Աշխատակազմին՝ իրազեկելով, որ Ա/Ձ-ն խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, և առաջարկել սահմանված կարգով լուծել Պայմանագիրը: Ուստիև, հիմք ընդունելով վերոհիշյալ հանգամանքը՝ Աշխատակազմը միակողմանի հրաժարվում է 2020թ. ապրիլի 28-ին Ա/Ձ-ի հետ կնքված «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/11-1» ծածկագրով ծառայությունների ձեռքբերման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն ամբողջությամբ լուծված»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/235 ընթացակարգի շրջանակներում 03.11.2020թ. ժամը 10:00-ին և 09.11.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/235 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/235 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ վարչապետի աշխատակազմի և Ա/Ձ Ջանիկ Սևոյանի միջև 28.04.2020թ. կնքվել է «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/11-1» ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Ա/Ձ Ջանիկ Սևոյանը ստանձնել է Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար տեղեկատվական ցանցի տեղադրման, սպասարկման և համակարգչային ցանցի կառուցման ծառայությունների մատուցման պարտավորություն՝ համաձայն պայմանագրի

N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. Ա/Ձ Ջանիկ Սևոյանը 27.08.2020թ. էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Պատվիրատուին տրամադրել է իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3) և հաշիվ վավերագիրը:

3. Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից 27.08.2020թ. կազմվել է N 01 եզրակացությունը հետևյալ բովանդակությամբ.

«Ա/Ձ Ջանիկ Սևոյանի կողմից ներկայացված N 1 արձանագրության մեջ ներկայացված տեղեկատվական ցանցի տեղադրման, սպասարկման, համակարգչային ցանցի կառուցման ծառայությունները չեն համապատասխանում ՀՀ վարչապետի աշխատակազմի և Ա/Ձ Ջանիկ Սևոյանի միջև 2020 թվականի ապրիլի 28-ին կնքված «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/11-1» ծածկագրով պայմանագրի N 1.1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տալիս եմ բացասական եզրակացություն»:

4. Պատվիրատուն 07.09.2020թ. էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձրել հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:

5. Ա/Ձ Ջանիկ Սևոյանին ուղղված 22.10.2020թ. թիվ 18.2/47838-2020 ծանուցմամբ ՀՀ վարչապետի աշխատակազմը հայտնել է հետևյալը.

«ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար տեղեկատվական ցանցի տեղադրման, սպասարկման և համակարգչային ցանցի կառուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով 2020թ. ապրիլի 28-ին Վարչապետի աշխատակազմի և Ա/Ձ Ջանիկ Սևոյանի միջև կնքվել է «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/11-1» ծածկագրով պայմանագիրը:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Կատարողը (տվյալ դեպքում՝ Ա/Ձ Ջանիկ Սևոյանը) ստանձնում է սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար տեղեկատվական ցանցի տեղադրման, սպասարկման և համակարգչային ցանցի կառուցման ծառայությունների մատուցման պարտավորություն՝ համաձայն պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Իսկ նույն

կետի «ա» ենթակետի համաձայն՝ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2020 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 01/15.2/6723-20 գրությամբ ներկայացված փաստերը, այդ թվում՝ այն հանգամանքը, որ Ա/Ձ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Վարչապետի աշխատակազմը՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է 2020թ. ապրիլի 28-ին Ա/Ձ-ի հետ կնքված «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/11-1» ծածկագրով ծառայությունների ձեռքբերման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Ա/Ձ-ի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N526-ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ հրապարակել է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը»:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 22.10.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.10.2020թ. թիվ 26/26-1/16235-2020 գրությունը, ՀՀ վարչապետի աշխատակազմի 23.10.2020թ. թիվ 18.2/47963-2020 գրությունը և կից փաստաթղթերը, Ա/Ձ Ջանիկ Սևոյանի 29.10.2020թ. դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված

բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 109-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Սույն կետում նշված անձը պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին: Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում: ***<u>Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է պատվիրատուի ղեկավարին</u>՝*** ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը ներկայացված առաջարկություններին համապատասխան ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար: ՀՀ պաշտպանության նախարարության պատվերներով իրականացվող տեղական արտադրության ռազմական նշանակության ապրանքի և (կամ) գույքի համար, որոնց ընդունումը (նախատեսված է) իրականացվել է պատվիրատուի ներկայացուցչության միջոցով, արձանագրության ստորագրման համար հիմք է ընդունվում ներկայացուցչության կողմից այդ ապրանքի և (կամ) գույքի համար տրված դրական եզրակացությունը:

Կարգի 110-րդ կետի համաձայն՝ Էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) պայմանագրի կամ դրա մի մասի ընդունման նպատակով պայմանագիր կնքած անձը դրանով սահմանված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: ***<u>Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը</u>***.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանման՝ ***<u>գնման հայտը նախագծած ներկայացուցիչն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին է տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն</u>***.

3) ***<u>եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է՝</u>***

ա. դրական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատում և էլեկտրոնային համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է ուղարկում հանձնման-ընդունման արձանագրությունը և եզրակացությունը, որոնք վերջինս 1 աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով տրամադրում է պայմանագիր կնքած անձին,

բ. բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:

Կարգի 111-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 109-րդ կետով նախատեսված գրավոր եզրակացության ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Այսպես՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի և Ա/Ձ Ջանիկ Սևոյանի միջև 28.04.2020թ. կնքվել է «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/11-1» ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Ա/Ձ Ջանիկ Սևոյանը ստանձնել է սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար տեղեկատվական

ցանցի տեղադրման, սպասարկման և համակարգչային ցանցի կառուցման ծառայությունների մատուցման պարտավորություն՝ համաձայն պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	72711100/1	տեղեկատվական ցանցի տեղադրման, սպասարկման և համակարգչային ցանցի կառուցման ծառայություններ համաձայն կից ներկայացվող Հավելված N 1.1-ի	դրամ		1	ք. Երևան Կոմիտասի 49/2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև չորս ամսվա ընթացքում

Պայմանագրի Հավելված 1.1-ով սահմանվել է հետևյալը.

Տեղեկատվական ցանցի տեղադրման, սպասարկման և համակարգչային ցանցի կառուցման ծառայություններ	
Չափաբաժին 1. տեղեկատվական ցանցի տեղադրման, սպասարկման և համակարգչային ցանցի կառուցման ծառայություններ	Պաշտոնական կայք նախատեսված Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի համար: ***<u>ԿԱՅՔԻ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</u>*** Կայքի գլխավոր էջը պետք է բավարարի հետեւյալ պահանջներին. Կայքի լեզուն՝ հայերեն (հիմնական), ռուսերեն, անգլերեն: Կայքի լեզվային տարբերակը որոշվում է 1-ին աղյուսակով՝ *Աղյուսակ 1.* **<u>Լեզվական ցուցիչները եւ անվանումները</u>** **Լեզվի ցուցիչ** — **Լեզվի անվանում** Հայ — Հայերեն Рус — Русский Eng — English Մկնիկի ուղղորդման ժամանակ ցուցիչն արծարծում է լեզվային տարբերակի լրիվ անվանման այլընտրանքային տեքստը: Օգտագործողը պետք է հնարավորություն ունենա կայքի ցանկացած էջում փոխելու կայքի լեզուն՝ մնալով նույնատիպ էջում: Կայքում տվյալ էջի թարգմանության բացակայության դեպքում պետք է այդ մասին գրվի հաղորդագրություն փոփոխվող լեզվով: **Կայքի յուրաքանչյուր էջ բաղկացած է 3 մասից՝** 1) վերին մաս (header). 2) միջին մաս (body). 3) ստորին մաս (footer): **Վերին մասը, կախված էջի բնույթից, փոփոխական է:** Կայքի ներսի էջերի վերին մասը որոշակիորեն կարող է տարբերվել կայքի գլխավոր էջի վերին մասից: Կայքի էջերի իջեցմամբ գլխավոր մենյուն չի բարձրանում վերեւ, այլեւ մնում է ֆիքսված կամ վերափոխվում է երեք գծիկի: Կայքի **միջին մասում** նշվում է հիմնական տեղեկատվությունը: Միջին մասի առանձնահատկություններից ելնելով՝ բնութագրվում է էջի տեսակը:

Կայքի **ներքին յուրաքանչյուր էջի միջին մաս բաղկացած է 2 կամ 3 շերտից**՝ կենտրոնական եւ եզրային: Կախված տվյալ էջի դիզայներական առանձնահատկություններից՝ եզրային շերտը կարող է բացակայել:

Կայքի **ստորին մասն** անփոփոխ է եւ ունի այն տեսքը, ինչ կայքի գլխավոր էջի ստորին մասը:

Գլխավոր էջը բաժանվում է 3 մասի.

1) վերին մաս.
2) միջին մաս.
3) ստորին մաս:

Գլխավոր էջի վերին մասը պետք է առնվազն պարունակի՝

1) Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի խորհրդանշանը.
2) լեզուների ընտրության տարբերակները.
3) մենյու (կամ մենյուներ).
4) որոնում կայքում.
5) Հայաստանի Հանրապետության գերբը եւ դրոշը.
6) Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի խորհրդանշանը:

Կայքի **որոնումն** աշխատում է բոլոր բառ պարունակող նյութերի համար (հոդված, հայտարարություն, նկարադարանի անվանում, վերբեռնված ֆայլի անվանում՝ հոդվածի մեջ եւ այլ): Որոնումը չի աշխատում նկարների կամ դրանց համարժեք նյութերի մեջ (տեսանյութ, վերբեռնված ֆայլ):

Կայքի **մենյուները** պետք է լինեն փոփոխելի, կառավարելի, դասավորելի՝ առնվազն 4 մակարդակ ենթամենյուների ստեղծման հնարավորությամբ:

Կայքի կամայական մենյուի պետք է հնարավոր լինի կցել որեւէ տեսակի էջ կամ ցանկ, ինչպես նաեւ տեղադրել հղում մենյուի անվանման տակ: Կայքի էջերը կամ մենյուները պետք է ունենան վերնագրեր:

Կայքի էջերի ձախ կողմում պետք է տեղակայվեն ենթամենյուներ՝ ըստ ընտրության:

Գլխավոր էջի միջին մասը առնվազն պետք է պարունակի՝

1) Նորություններ/Տեսադարան/Նկարադարան
2) բաններներ եւ/կամ հղումներ մանրակերպերի միջոցով (ոչ պակաս քան 15 հատ)
3) ներմուծման/արտահանման շաբաթական տվյալներ
4) Հետադարձ կապի տվյալներ

Գլխավոր էջի ստորին մասը պետք է պարունակի՝

1) պատվիրատուի անվանումը
2) տեղեկատվություն հեղինակային իրավունքի պաշտպանության մասին.
3) համառոտ մենյու (բացվածքով կամ միայն գլխագրերով).
4) հղում կայքի քարտեզին.
5) հղում սոցիալական ցանցերին.
6) յուրաքանչյուր տարի տվյալ տարվա տարեթիվը (ինքնաշխատ թարմացվող).
7) հղում կայքը պատրաստողի կայքին կամ համապատասխան ռեսուրսին.
8) հղումներ միջազգային կառույցներին.
9) այլ հղումներ:

ԿԱՅՔԻ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ԷՋԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՎԵԼՅԱԼ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Տվյալ բաժնում ներկայացված են կայքի յուրօրինակ էջերի նկարագիրը եւ հավելյալ ֆունկցիոնալությունը:

Բոլոր նյութերը պետք է հնարավոր լինի պահպանել ադմինիստրատիվ մասինց՝ որպես սեւագիր, ապակտիվացնել եւ խմբագրել:

Կայքի առաջին էջը

Կայքի առաջին էջի գեղատեսքը կարող է թողնվել նույնը: Կատարողի կողմից ներկայացվում է գեղատեսքի եւս 1 տարբերակ: Պատվիրատուի կողմից կատարվում է ընտրություն 3 աշխատանքային օրվա ընթացքում, եւ ընտրությունը կամ փոփոխության առաջարկությունները ուղարկվում են Պատվիրատուին Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստով: Պատվիրատուն կարող է կատարել ներկայացված գեղատեսքում փոփոխություն՝ 1 անգամ:

Նորության էջ

Ներկայացվում են Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի նորությունները՝ ամսաթվով, նկարով (կամ առանց նկարի) եւ վերնագրով: Առաջին էջում կերեւա 3 կամ 4 նորություն: Բոլորը նորություններին կարելի է ծանոթանալ՝ «Դիտել բոլորը» հղումը սեղմելով: Ներկայացվում է ցանկ՝ նկարով, ամսաթվով եւ համառոտ նկարագրով: Դասավորվածությունը՝ վերջինը վերեւ:

Նկարադարանի էջ

Պետք է հնարավոր լինի պատրաստել ալբոմ՝ եռալեզու վերնագրով, նկարների վերբեռնման եւ դասավորության փոփոխման հնարավորությամբ:

Ալբոմները պետք է ցուցադրվեն ցանկով՝ գլխավոր նկարով, վերնագրով, վերջին ամսաթվովը՝ վերեւ հերթականությամբ:

Տեսադարանի էջ

Պետք է հնարավոր լինի տեղադրել հոլովակ՝ ֆայլի վերբեռնմամբ, կամ Յութուբի հղում տեղադրելով: Հոլովակը պետք է ունենա վերնագիր՝ եռալեզու, առաջին էջի նկարը վերբեռնման հնարավորություն:

Հոլովակները պետք է ցուցադրվեն ցանկով՝ գլխավոր նկարով, վերնագրով, վերջին ամսաթվովը՝ վերեւ հերթականությամբ:

Փաստաթղթերի ցանկի էջ

Ներկայացվում են փաստաթղթերը կամ իրավական ակտերը՝ վերբեռնման ամսաթվով, ֆայլով, ֆայլի ինքնաշխատ երեւացող մանրանկարով եւ նկարի վերբեռնման հնարավորությամբ, վերնագրով: Դասավորվածությունը՝ վերջինը վերեւ:

Տեղեկատվական էջ

Ներկայացվում է տեքստ՝ որոշակի բովանդակությամբ, նկար տեղադրելու հնարավորությամբ: Տեքստը պետք է լինի խմբագրիչով կառավարելի ադմինիստրատիվ մասում:

Կայքի բոլոր նկարները պետք է լինեն հասանելի՝ կայքի ադմինիստրատիվ մասի ֆայլ-մենեջերով:

Տնտեսավարողի գրանցման էջ

Ներկայացվում է տնտեսավարողի գրանցման գործիք՝ գրանցման առկայությունը ստուգման հնարավորությամբ: Դիզայնի օրինակը ներկայացված է գործող կայքում:

Գրանցված տնտեսավարողների մասին տեղեկատվությունը պետք է տեղակայվի առկա տվյալների բանկում՝ ըստ գործող կանոնների:

Ռիսկերի գնահատման մոդուլ

Տնտեսավարող սուբյեկտը կատարում է ապրանքի, երկրի, խմբաքանակի եւ այլ տվյալների ընտրություն, վերբեռնում է անհրաժեշտ փաստաթղթերը եւ ստանում է ռիսկի միավորը:

Արտաքին տնտեսական գործունեության համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի էջ

Տնտեսավարող սուբյեկտը կատարում է ապրանքի, երկրի, խմբաքանակի եւ այլ տվյալների ընտրություն, ստանում է քայլերի հաջորդականություն, որն անհրաժեշտ է կատարել նախքան ներմուծումը կամ արտահանումը:

Պատվիրատուն տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվության լիարժեք նմուշօրինակ՝ պատկերացում կազմելու համար գործիքի ֆունկցիոնալության մասին:

Կատարողը ստեղծում է գործիք, որը հնարավոր է համալրել/լցնել ադմինիստրատիվ մասից:

Կայքն իրենից ներկայացնում է էլեկտրոնային տեղեկատվական դինամիկ համակարգ, որի աշխատանքի համար անհրաժեշտ են դոմենային անվանում եւ հոսթինգ (սերվեր):

Կայքի բոլոր էջերի եւ ցանկերի տեքստային բովանդակությունը պետք է լինի ադմինիստրատիվ մասից խմբագրելի՝ առանց ծրագրային միջամտության: Կարող են բացառություն կազմել վերին, ստորին եւ եզրային մասերի ստատիկ տարրերը եւ կառուցվածքի գծապատկերը:

Աշխատանքի համար անհրաժեշտ տեխնիկական պայմաններն են՝ LAMP (Linux, Apache, MySQL, PHP 7.xs):

Կայքի ծրագրավորման համար օգտագործվող տեխնոլոգիաներն են՝ HTML, PHP, CSS, JavaScript, JQuery, MVC (նախատեսվում է, սակայն չի սահմանափակվում):

Կայքի պատշաճ տեսանելիությունը տարբեր սարքավորումներով ապահովելու համար պետք է կատարվի «responsive web design» տեխնոլոգիայի պահանջներին համապատասխան առնվազն եռաշերտ գեղատեսք (դիզայն):

Կայքը պետք է բավարարի ՀՀ Կառավարության 2013թ. դեկտեմբերի 26-ի N 1521-Ն «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» որոշման պահանջներին, ինչպես նաեւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պահանջների:

Կայքը պետք է հնարավորություն ունենա միացնելու Mulberry փաստաթղթաշրջանառության համակարգին՝ նամակագիրներին հնարավորություն տալով հետեւելու իրենց նամակի ընթացքին:

Կայքը պետք է բավարարի արագագործության եւ անվտանգության՝ միջազգայնորեն ընդունված նորմերին՝ առնվազն 75%-ով:

Կայքը պետք է պատշաճ տեսքով ցուցադրվի առնվազն Google Chrome եւ Mozilla դիտարկիչների վերջին տարբերակներով:

Կայքում պետք է նախատեսել հնարավորություն հետագայում հեշտ ինտեգրելու Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնում եւ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնիից դուրս գործող համակարգերին, ինչպես նաեւ Google-ի աղյուսակներին եւ ձեւանմուշներին:

Կայքի պատրաստման ընթացքում պետք է կիրառվեն միայն open source տեխնոլոգիաներ, կամ վճարովի ծրագրային բաղադրիչներից օգտվելու դեպքում պետք է Կատարողը տրամադրի անժամկետ լիցենզիա:

Կայքի պատրաստման ընթացքում պետք է օգտագործվեն ազատ լիցենզիայով կամ հեղինակային իրավունքների պահպանմամբ նկարներ եւ մանրակերպեր:

Կայքի պատրաստման ընթացքում չպետք է կիրառվի Joomla, Wordpress, Drupal կամ այլ, պատրաստի կոնտենտի կառավարման համակարգեր:

Կայքում նյութերի, նկարների եւ հոլովակների տեղադրումը պետք է կատարվի բացառապես ադմինիստրատիվ վահանակի միջոցով:

Կայքի հանձնման փուլում պետք է տրամադրվեն կայքի բոլոր կոդերը՝ արտաքին կրիչով:

Ա/Ձ Ջանիկ Սևոյանը 27.08.2020թ. էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Պատվիրատուին տրամադրել է իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3) և հաշիվ վավերագիրը:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից 27.08.2020թ. կազմվել է N 01 եզրակացությունը՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ա/Ձ Ջանիկ Սևոյանի կողմից ներկայացված N 1 արձանագրության մեջ ներկայացված տեղեկատվական ցանցի տեղադրման, սպասարկման, համակարգչային ցանցի կառուցման ծառայությունները չեն համապատասխանում ՀՀ վարչապետի աշխատակազմի և Ա/Ձ Ջանիկ Սևոյանի միջև 2020 թվականի ապրիլի 28-ին կնքված «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/11-1» ծածկագրով պայմանագրի N 1.1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տալիս եմ բացասական եզրակացություն»:

Պատվիրատուն 07.09.2020թ. էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձրել հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:

Այնուհետև Պատվիրատուն 11.09.2020թ. Ա/Ձ Ջանիկ Սևոյանին ուղղված թիվ 5805-20 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի և «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ի միջև 2020 թվականի ապրիլի 28-ին կնքված Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կարիքների համար N «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/11-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ի կողմից մատուցված ծառայությունների որոշ կետեր չեն համապատասխանում պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին (ինչի մասին armeps համակարգով Ձեզ տեղեկացվել է՝ տալով բացասական եզրակացություն):

Մասնավորապես՝

1. մկնիկի ուղղորդման ժամանակ ցուցիչը չի արձարձում լեզվային տարբերակի լրիվ անվանման այլընտրանքային տեքստը,

2. կայքի որոնումը աշխատում է ոչ բոլոր բառ պարունակող նյութերի (հոդված, հայտարարություն, նկարադարանի անվանում, վերբեռնված ֆայլի անվանում՝ հոդվածի մեջ և այլն) դեպքում,

3. կայքի մենյուները ունեն 2 մակարդակ, պահանջվող առնվազն 4-ի փոխարեն,

4. գլխավոր էջի ստորին մասը չի պարունակում հղում կայքի քարտեզին,

5. նյութերը ադմինիստրատիվ մասից հնարավոր չէ պահպանել որպես սևագիր, կամ ապաակտիվացնել,

6. նոր նյութ ստեղծելիս հնարավոր չէ այն ստեղծել նկարի բացակայության դեպքում,

7. կայքի ոչ բոլոր նկարներն են հասանելի կայքի ադմինիստրատիվ մասի ֆայլ-մենեջերում,

8. գրանցված տնտեսավարողների մասին տեղեկատվությունը չի տեղակայվում առկա տվյալների բանկում՝ ըստ գործող կանոնների,

9. կառավարման վահանակից Ա/Տ գործունեությունը խմբագրելիս՝ ֆայլի բեռնում տեղի չի ունենում,

10. ադմինիստրատիվ մասում նորություն, Ա/Տ գործունեություն և այլն ավելացնելիս՝ պարտադիր դաշտերի սխալ լրացման դեպքում «Հաստատել» կոճակը սեղմելուց հետո արծարծվում է անհրաժեշտ գործողությունների ցանկը, սակայն արդեն իսկ լրացված տեղեկատվությունը չեղարկվում է:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 2-րդ կետի 2.1.2 ա) ենթակետը՝ Տեսչական մարմինը 10 օր ժամկետ է սահմանում վերը նշված թերությունները վերացնելու համար:

Վերը նշված ժամկետում թերությունները վերացնելուց հետո խնդրում ենք տեղեկատվական ցանցի տեղադրման, սպասարկման և համակարգչային ցանցի ծառայությունները (կայքը) ներկայացնել Տեսչական մարմին՝ սահմանված կարգով փորձարկելու և հանձնում-ընդունում կատարելու համար:

Սահմանված ժամկետում թերությունները չվերացնելու դեպքում՝ Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3 ա) ենթակետի համաձայն՝ պայմանագիրը միակողմանի կլուծվի»:

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի էլեկտրոնային կառավարման և սպասարկման բաժնի կողմից 14.10.2020թ. Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարին ներկայացվել է զեկուցագիր՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին (այսուհետ՝ ՍԱՏՄ) մինչ օրս չի հանձնվել 2020թ. ապրիլի 28-ին պետության կարիքների

համար ծառայությունների մատուցման գնման N «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/11-1» կնքված պայմանագրի առարկան հանդիսացող ծառայությունը, իսկ պայմանագրի առարկա հանդիսացող կայքը ՍԱՏՄ մասնագետները դիտել են կատարողի կողմից էլ. Փոստի միջոցով ողարկված newsnund.sevuni.am հղմամբ, որը հասանելի է եղել միայն մի քանի օր: ՍԱՏՄ մասնագետների ուսումնասիրության արդյունքում ի հայտ են եկել պայմանագրի 1.1 հավելվածի հետանհամապատասխանություններ, որոնց մասին տեղյակ է պահվել կատարողին և տրվել ժամանակ շտկումների համար: Ի պատասխան կատարողը 2020թ. սեպտեմբերի 15-ին գրությամբ ներկայացրել է պարզաբանում՝ կցելով տեսահոլովակներ կայքի վերաբերյալ: Սակայն, newsnund.sevuni.am հղման անհասանելիության պատճառով տեսահոլովակների բովանդակությունը հնարավոր չի եղել ստուգել կայքով աշխատելիս:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում եմ խզել պետության կարիքների համար ծառայությունների մատուցման գնման N «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/11-1» պայմանագիրը»:

Այնուհետև՝ 22.10.2020թ., Ա/Ձ Ջանիկ Սևոյանին ուղղված թիվ 18.2/47838-2020 ծանուցմամբ ՀՀ վարչապետի աշխատակազմը հայտնել է հետևյալը.

«ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար տեղեկատվական ցանցի տեղադրման, սպասարկման և համակարգչային ցանցի կառուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով 2020թ. ապրիլի 28-ին Վարչապետի աշխատակազմի և Ա/Ձ Ջանիկ Սևոյանի միջև կնքվել է «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/11-1» ծածկագրով պայմանագիրը:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Կատարողը (տվյալ դեպքում՝ Ա/Ձ Ջանիկ Սևոյանը) ստանձնում է սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար տեղեկատվական ցանցի տեղադրման, սպասարկման և համակարգչային ցանցի կառուցման ծառայությունների մատուցման պարտավորություն՝ համաձայն պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Իսկ նույն կետի «ա» ենթակետի համաձայն՝ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով,

ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2020 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 01/15.2/6723-20 գրությամբ ներկայացված փաստերը, այդ թվում՝ այն հանգամանքը, որ Ա/Ձ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Վարչապետի աշխատակազմը՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է 2020թ. ապրիլի 28-ին Ա/Ձ-ի հետ կնքված «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/11-1» ծածկագրով ծառայությունների ձեռքբերման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Ա/Ձ-ի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N526-ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ հրապարակել է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը»:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 22.10.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ

որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ***Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:***

3.3 ***Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:*** Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 20.05.2017թ. «Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացության ձևը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի N 180-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 228-Ն հրամանի (հետայսու նաև՝ Հրաման) Հավելվածով սահմանվել է հետևյալը.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«_____»«_____» 20 ___ թ.
Պայմանագրի անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_____»«_____» 20 ___ թ.
Պայմանագրի համարը _____
Պատվիրատուի անվանումը _____
Պայմանագրի կողմի անվանումը _____
Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում պայմանագրի իրականացրել է հետևյալ աշխատանքները (մատակարարումներ, ծառայություններ)՝

N	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների					
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը	
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի

Նշումներ անհամապատասխանությունների մասին՝
_____
_____
_____
_____
_____
_____

Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ _____ եզրակացություն:

Նույն հավելվածի 5-րդ կետով սահմանվում է, որ կատարված աշխատանքները, մատուցված ծառայությունները և մատակարարված ապրանքները՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին, քանակական ցուցանիշներին և գնման ժամանակացույցին համապատասխանելու դեպքում «**Նշումներ անհամապատասխանությունների մասին»** բաժնում լրացվում են միայն հետևյալ բառերը՝ «անհամապատասխանությունները բացակայում են**», հակառակ դեպքում՝ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները:**

Այսպիսով՝ Պայմանագրի 3-րդ կետի 3.3 ենթակետի համաձայն՝ եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը, իսկ ՀՀ ֆինանսների նախարարի 20.05.2017թ. «Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացության ձևը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի N 180-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 228-Ն հրամանի Հավելվածով հստակ

սահմանված է Պայմանագրի շրջանակներում Կատարողի կողմից մատուցված ծառայությունների վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրության չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացության ձևը, ***մասնավորապես՝ Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված եզրակացության մեջ պետք է մանրամասն նշվեն բոլոր անհամապատասխանությունները, որպեսզի Կատարողն ունենա դրանք շտկելու հնարավորություն, մինչդեռ 27.08.2020թ. Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից կազմված N 01 եզրակացության մեջ ընդամենը նշվել է, որ Ա/Ձ Ջանիկ Սևոյանի կողմից ներկայացված N 1 արձանագրության մեջ ներկայացված տեղեկատվական ցանցի տեղադրման, սպասարկման, համակարգչային ցանցի կառուցման ծառայությունները չեն համապատասխանում ՀՀ վարչապետի աշխատակազմի և Ա/Ձ Ջանիկ Սևոյանի միջև 2020 թվականի ապրիլի 28-ին կնքված «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/11-1» ծածկագրով պայմանագրի N 1.1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:***

Այնուհետև Պատվիրատուն 07.09.2020թ. (մինչև սահմանված 10 աշխատանքային օր ժամկետի լրանալը) էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Ա/Ձ Ջանիկ Սևոյանին հետ է վերադարձրել հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած ՀՀ ֆինանսների նախարարի 20.05.2017թ. N 228-Ն հրամանով սահմանված պահանջների խախտմամբ կազմված բացասական եզրակացությունը, որից հետո միայն՝ 11.09.2020թ. (սահմանված 10 աշխատանքային օր ժամկետը լրանալուց հետո 1 օր անց), Ա/Ձ Ջանիկ Սևոյանին ուղղված թիվ 5805-20 գրությամբ մանրամասն թվարկվել են բոլոր անհամապատասխանությունները:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուն, Պայմանագրի 3-րդ կետի 3.2 ենթակետով սահմանված ժամկետների և ***Հրամանով սահմանված պահանջների խախտմամբ, այն է՝ առանց մանրամասն նշելու բոլոր անհամապատասխանությունները, կազմելով բացասական եզրակացություն, Ա/Ձ Ջանիկ Սևոյանին հետ է վերադարձրել հանձնման-ընդունման արձանագրությունը, այնուհետև՝ սահմանված 10 աշխատանքային օր ժամկետը լրանալուց հետո՝ 1 օր անց՝ 11.09.2020թ., Ա/Ձ Ջանիկ Սևոյանին ուղղված թիվ 5805-20 գրությամբ մանրամասն թվարկելով բոլոր անհամապատասխանությունները, առաջարկել է շտկել դրանք՝***

<u>արդյունքում Ա/Ձ Ջանիկ Սևոյանին զրկելով իր իրավունքները սահմանված ժամկետում իրացնելու՝ օրենքով իրեն վերապահված հնարավորությունից:</u>

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործում առկա նյութերը, մասնավորապես՝ 27.08.2020թ. պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից կազմված N 01 եզրակացությունը՝ գտնում եմ, որ Ա/Ձ Ջանիկ Սևոյանի վարքագիծը չի կարող գնահատվել որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ***<u>քանի որ, ինչպես արդեն որոշմամբ արձանագրվեց, Պատվիրատուն, 07.09.2020թ. վերադարձնելով հանձնման-ընդունման արձանագրությունը՝ հիմքում դնելով սահմանված ձևի խախտմամբ կազմված՝ առանց անհապատասխանությունների հստակ նկարագրության, բացասական եզրակացությունը՝ Ա/Ձ Ջանիկ Սևոյանին չի ընձեռնել անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պայմանագրի միակողմանի լուծման:</u>***

Ինչ վերաբերում է Ա/Ձ Ջանիկ Սևոյանին 11.09.2020թ. ուղղված թիվ 5805-20 գրությամբ արդեն իսկ 27.08.2020թ. տրված բացասական եզրակացությամբ արձանագրված անհամապատասխանությունների մասնավորեցմանը, ապա գտնում եմ, որ այն չի կարող նույնականացվել եզրակացությամբ տրամադրված անհամապատասխանությունների հետ և չի կարող համարվել եզրակացության մաս, քանի որ այդ մասնավորեցումը տրվել է ՀՀ ֆինանսների նախարարի 20.05.2017թ. N 228-Ն հրամանով սահմանված պահանջների խախտմամբ և չկա նման որևէ իրավական կարգավորում Հրամանով սահմանված եզրակացությունը նման անհամապատասխանությունների մասնավորեցմամբ շտկելու համար, հետևաբար Ա/Ձ Ջանիկ Սևոյանն իրավունք ուներ չվստահելու գրությամբ մատնանշված Պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների որոշ կետերի՝ պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններին և ըստ այդմ չէր կարող կրեր պարտավորություն՝ գրությամբ նշված անհամապատասխանությունները շտկելու համար, քանզի 11.09.2020թ ուղղված թիվ 5805-20 գրությամբ նշված թերությունները կարող էին և պետք է արձանագրվեին եզրակացությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.10.2020թ. թիվ 26/26-1/16235-2020 գրությամբ Ա/Ձ Ջանիկ Սևոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**